

7540



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 03 » 07 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 108 - 24

Նախաձեռնող՝

«Գրին Օրգանիկ» ՍՊԸ
ք. Երևան, Աբովյան 29

Գործունեությունը՝

Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում
Արին Բերդի 5/7 հասցեի 3-րդ նրբանցք, 6/2 հասցեում
նախատեսվող օրգանական պարարտանյութերի և
կենսազազի արտադրություն
քաղաք Երևան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 108 - 24
« 03 » 04 2024թ.

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում՝ Արին Բերդի 5/7 հասցեի 3-րդ նրբանցք, 6/2 հասցեում նախատեսվող օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրություն

Ներածական մաս

Նախաձեռնող՝ «Գրին օրգանիկ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության կատեգորիա՝ «Ա»
Տեղադրման վայրը՝ քաղաք Երևան, Էրեբունի համայնք

Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ ՇՄԱԳ հաշվետվություն/ «Գրին օրգանիկ» ՍՊԸ-ն նախատեսում է օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /2014թ ՀՕ-110-Ն/ համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանում՝ Արին Բերդի 5/7, 3-րդ նրբանցք, 6/2 հասցեներում՝ արդյունաբերական գոտում:

Տարածքը հանդիսանում է «Ֆայլվորդ» ՍՊԸ-ի սեփականությունը, տարածքի որոշ մասը վարձակալությամբ օգտագործում է «Գրին օրգանիկ» ընկերությունը, որի մակերեսը կազմում է 1.3934 հա: Շրջակայքում գտնվում են այլ գործող և չգործող արտադրական տարածքներ և շինություններ:

Գործունեության նպատակն է գյուղատնտեսության համար էկոլոգիապես մաքուր պարարտանյութերի արտադրություն՝ օրգանական գյուղմթերք աճեցնելու նպատակով, ինչպես նաև սեփական կարիքների համար կենսագազի միջոցով էներգետիկ էլեկտրաէներգիայի ապահովում:

Գործունեության համար նախատեսված տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում: Մոտակա բնակելի թաղամասերը գտնվում են մոտ 1.4 -1.8 կմ, «Էրեբունի» թանգարանը 4 կմ հեռավորության վրա: Տեղանքի ռելիեֆը հարթ է, ծովի մակերևույթից գտնվում է 927 մ բարձրության վրա: Սեյսմակայնությունը՝ 8-9 բալ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է տաք կլիմայական գոտում, ամռանը՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21°C, հարաբերական խոնավությունը՝ 35% ցածր: Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C-ով ցածր:



հարաբերական խոնավությունը 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ: Պայմանավորված խիտ կառուցապատված լինելու հանգամանքով՝ նախատեսվող գործունեության իրականացման և հարակից տարածքներում, բուսածածկը և վայրի կենդանիներն, ինչպես նաև «Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են:

Վարձակալված տարածքը ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման համակարգերով: Ջրամատակարարումն իրականացվում է «Վեոլիա ջուր» ընկերության ջրատարից, կոյուղին միացված է Երևանի քաղաքային կոյուղատարին:

Արտադրական մասնաշենքն ապահովված է ինչպես բնական օդափոխության համակարգով /դեֆլեկտորներ/, այնպես էլ օդամղիչով, որը մասնաշենքի օդը մղում է դեպի դուրս:

Գործունեության իրականացման աշխատանքային օրերի թիվը կազմում է 312 օր/տարի:

Որպես օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրության հումք նախատեսվում է օգտագործել հացահատիկի մեխանիկական մաքրումից առաջացած թափոններ, սննդամթերքի շլամանման թափոններ, պահածոյացված և սառեցված մթերքի մնացորդներ /միրգ, բանջարեղեն/, գարեջրի արտադրության շլամ և մնացորդներ, էթիլ սպիրտի և կերային խմորիչների արտադրության թափոններ, գինեգործության նստվածքներ, իսկ հետագայում՝ նաև նախատեսվում է որպես հումք օգտագործել թռչնաբուծարանների և խոշոր եղջերավոր կենդանիների գոմաղբը:

Համաձայն հաշվետվության՝ ալրադացների ցորենի թափոնը, սննդային և մթերքի վերամշակման մնացորդները տեղափոխվելու են պլաստիկ պարկերով, խմիչքների արտադրության մնացորդները՝ հեղուկատար մեքենաներով, իսկ թրչնաղբը և գոմաղբը բազմակի օգտագործման փակ կոնտեյներներով: Տեղափոխումն իրականացվելու է ինչպես վաճառողի, այնպես էլ ընկերության տրանսպորտային միջոցներով:

Հումքի տեղափոխման համար նախատեսված են 3 բեռնատար քարշիչ, 3 ջրատար տարողություն /ցիստեռն/ և 3 հատ կցորդ:

Հումքի ընդհանուր քանակը (խոնավ և չոր)՝ 60000 – 70000 տ/տարի է:

Գարեջրի արտադրության հեղուկ մնացորդները, գինեգործական մածուկի կամ դրա ֆերմենտացման արտադրանքի ընդունումը, որը մատակարարվում է ինքնաթափով, իրականացվում է ընդունիչ խցիկում, որը հագեցած է բեռնաթափման պտուտակավոր փոխակրիչով և խցիկներից օրգանական մնացորդները լվանալու սարքով «Ընդունող խցիկը» բետոնե կոնստրուկցիա է ≈ 30 մ³ աշխատանքային ծավալով:

Բեռնաթափման պտուտակն ապահովված է 5.5 կՎտ/ժամ հզորությամբ փոխանցման շարժիչով /նոմինալ հզորությունը ≈ 30 տ/ժամ/:

Սորուն նյութերի ընդունման, պահպանման և սնուցման համար (օրինակ՝ կիր, բույսերի մնացորդներ դաշտերից և խաղողի այգիներից) օգտագործվում է ծածկված բետոնապատ տարածք՝ $\approx 300-500$ մ² ընդհանուր մակերեսով:

Արտադրամասի կավիտացիայի տեղամասում հումքի նախապատրաստման հանգույցը նախատեսված է նյութերի խառնուրդի կազմավորման համար: Այստեղ ապահովվում են քիմիական բաղադրությունը և ջրային միջավայրը: Հանգույցի սարքավորումները բաղկացած են հերմետիկ ավազանից՝ ալկոհոլային լուծույթի ընդունման, պահպանման և տաքացման մատակարարման համար՝ 500 մ³ աշխատանքային ծավալով: Սպիրտային մնացորդների օրական չափաքանակի տաքացման տարողություն (100մ³), որը տաքացվում է սեռանման արտադրության մեթան գազով: Լուծույթը տաքացվելու է մինչև 60°C: Տաքացումը կատարվելու է կաթսայի միջոցով, որի հզորությունը կազմում է 10 մ³/ժամ:



խմորման գործընթացի հիմնական ցուցանիշներն են- $Ph > 7.5$,

- խմորումն անաերոբ /առանց մթնոլորտային թթվածնի/;

- ակտիվ խմորման գործընթացների համար պահպանվելու է աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը՝ $+ 30^{\circ} + 55^{\circ}C$ սահմաններում, ինչպես նաև ապահովվելու է լուծույթի ստորին շերտերի պարբերական (կամ շարունակական) խառնումը վերին շերտերի հետ,

- արտադրված կենսազազի ծավալն ուղղակի կախված է միջուկում չլուծվող օրգանական նյութերի պարունակությունից (անաերոբ միկրոօրգանիզմների համար սննդարար միջավայր):

Նախատեսվում է 1 աշխատանքային օրում արտադրել մինչև 250 մ^3 կենսալուծույթ: Կենսաֆերմենտացման ժամանակը $\approx 5-7$ օր է: Այսպիսով, 8-րդ օրը խմորման բաքը դատարկվելու է և բեռնվելու է կենսալուծույթի նոր չափաքանակ:

Յուրաքանչյուր տարողություն համալրված է կենսազազի դուրս բերման խողովակով, ցածր ճնշման անվտանգության փականով (0.95 մթն), բարձր ճնշման անվտանգության փականով (1.15 մթն), ջրահեռացման ելքային խողովակով ($DU-50$), որը տեղադրված է տարողության հատակին՝ $NPSH-50$ պոմպով:

Միջին հաշվով 1 մ^3 կենսալուծույթից արտադրվում է $50-60 \text{ մ}^3$ կենսազազ: Կայանքի միջին արտադրողականությունը կազմում է՝ $1550 \text{ մ}^3/\text{ժամ}$:

Կենսաֆերմենտացման գործընթացից հետո օրգանական նյութերի լուծույթը /«Արմենիա BAV-Gum-1»/ մղվում է 200 մ^3 ծավալով բաքի մեջ: Պոմպային համակարգը լրացուցիչ համալրված է գտիչով: Արտադրանքն առաքվելու է գնորդներին ավտոցիստեռներով, որոնք կցվում են 200 մ^3 ծավալով բաքից հատուկ խողովակի միջոցով:

Կենսազազի վերամշակման առաջարկվող եղանակը ներառում է մաքրման և տարանջատման եռաստիճան համակարգ.

- առաջին փուլում տեղի է ունենում կենսազազի «կրիոգեն» չորացում (հովացում մինչև $T \approx 10-15^{\circ}C$) ջրի գոլորշիների խտացումով ($\approx 90\%$),

- երկրորդ փուլում կենսազազը մաքրվում է ջրածնի սուլֆիդից ակտիվացված ածխածնով լցված կլանման /ադսորբցիոն/ աշտարակում, ծծմբի կլանման աստիճանը տատանվում է 250 -ից մինչև 520 կգ / 1 մ^3 ակտիվացված ածխի հաշվարկով,

- երրորդ փուլում կենսազազը բաժանվում է մեթան գազի և ածխաթթու գազի կլանման աշտարակում՝ օգտագործելով մոնոէթանոլամինային լուծույթ:

Մաքրված գազի /մեթան/ արտադրողականությունը ընդունվում է 24.18 հազար մ^3 : Կենսազազը մղվում է հատուկ բաքերի մեջ:

Նախատեսվում է երկու հատ չորանոց՝ 236 -ից $698 \text{ մ}^3/\text{ժամ}$ հզորությամբ: Սարքավորումը բաղկացած է գազ-ջուր ջերմափոխանակիչից, ջեռուցվող ջերմափոխանակիչից, ինչպես նաև ցիկլոնից: Կենսազազի հետ շփվող բոլոր բաղադրիչները պատրաստված են չժանգոտվող պողպատից:

Կենսազազից խոնավության հեռացումը տեղի է ունենում մի քանի փուլով: Կենսամեթանը կոմպրեսորի միջոցով ուղարկվում է ապրանքային բաքեր, որտեղից մղվում է գեներատոր կամ լցվում է բալոնների մեջ գնորդներին առաքելու համար: Մեթան գազի ընդհանուր արդյունահանումն օրվա կտրվածքով կազմում է $\approx 24180 \text{ մ}^3$: Տարեկան աշխատանքային օրերի նախատեսվող թիվը՝ 330 օր, համապատասխանաբար մեթան գազի տարեկան արտադրողականությունը կարող է կազմել՝ 7979.4 հազ. մ^3 :

Չոր սառույցի տեղամասում՝ $99,97\%$ մաքրությամբ ածխածնի երկօքսիդը մշակվում է ստանդարտ տեխնոլոգիական սխեմայի համաձայն.

- սառեցվում և սեղմվում մինչև հեղուկ վիճակ ($-600C$);

- լրացուցիչ սառեցում մինչև «չոր սառույցի» վիճակ ($-900C$):



Ածխաթթու գազի միջին արտադրողականությունը ≈ 344 կգ/ժ է: Չոր սառույցի արտադրողականությունը կազմում է ≈ 300 կգ/ժամ կամ ≈ 216 տոննա ամսական:

Արտադրական գործընթացը կազմակերպելու արդյունքում ազդեցությունը մթնոլորտային օդի վրա պայմանավորված է առաջին հերթին կենսագազի այրման, ինչպես նաև նյութերի չորացման ընթացքում առաջացող արտանետումներով:

Կենսագազի այրումը կատարվում է՝

- սպիրտային արտադրության մնացորդների տաքացման կաթսա, 36 մ³/ժամ, 2496 ժամ/տարի,
- չոր սառույցի արտադրության կուբային մնացորդի տաքացման կաթսա՝ 4380 ժամ/տարի, գազ՝ 12 մ³/ժամ,
- գեներատոր գազի ծախսը՝ 1007.5 մ³/ժամ:

Համաձայն հաշվետվության բոլոր կաթսաների արտանետումների հաշվարկը կատարվել է՝ ըստ «Մինչև 5.8 մվտ դրվածքային հզորությամբ պինդ, հեղուկ և գազային վառելիքով աշխատող կաթսայատների վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի» մեթոդական ցուցումների, իսկ գեներատորի արտանետումների հաշվարկն՝ ըստ ԵՄ մեթոդակարգի:

Մեթան գազում մնացորդային ծծմբի այրման արդյունքում առաջացող ծծմբային անհիդրիդի (SO²) արտանետումները հաշվարկվել են քիմիական ռեակցիայի բանաձևի հիման վրա:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչային «Էռա» ծրագրով: Ռելիեֆի գործակիցն ընդունվել է 1.0, քանի որ 2 կմ շառավղով բարձրությունների տարբերությունը չի գերազանցում 50 մ:

Ըստ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը բոլոր նյութերի համար գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում:

№	Աղտոտող նյութեր	Բնակելի գոտիների առավելագույն միանվագ ՍԹԿ, մգ/մ ³	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները	
			մգ/մ ³	ՍԹԿ մասով
1	Ազոտի երկօքսիդ	0.2	0.1178	0.589
2	Ածխածնի օքսիդ	5	0.061	0.0102
3	Կախված մասնիկներ	0.5	0.11278	0.22557
4	Ծծմբի անհիդրիդ	0.5	0.0053	0.0106
5	Ածխաջրածիններ սահմանային	1.0	0.0628	0.0628
6	NO ₂ + SO ₂	-	-	0.3736

Հեռավորությունները մինչև մոտակա բնակելի թաղամասերը՝ Էրեբունի բնակելի թաղամասից՝ մոտ 1.8 կմ է, Խարբերդ բնակելի թաղամասից՝ մոտ 1.4 կմ և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոտակա 1 – 1.2 կմ վրա գտնվում են միայն արդյունաբերական օբյեկտներ, ՍՊԳ միջոցառումների պահանջ չի առաջացել:

Համաձայն հաշվետվության՝ օրգանական պարարտանյութերի գործարանում ջուրն օգտագործվելու է լուծույթների պատրաստման, ինչպես նաև աշխատակիցների խմելու կենցաղային նպատակների համար:

Սպիրտային և գարեջրի արտադրությունների հեղուկ թափոնները պարունակում են բավականաչափ քանակությամբ ջուր և լրացուցիչ նոսրացում չեն պահանջում:



Սննդային մնացորդների, ալրադացների թեփի և այլ թափոնների լուծույթների պատրաստման համար միանվագ օգտագործվելու է 600 մ³ ջուր:

Բնական գոլորշիացման արդյունքում ջրի կորուստը կազմում է 5 % օրական, որը լրացվում է թարմ ջրով: Թարմ ջրի օրական պահանջը կազմում է՝ $600 \text{ մ}^3 \times 0.05 = 30 \text{ մ}^3/\text{օր}$, 9360 մ³/տարի:

Ընկերությունը նախատեսում է կանաչապատել իր արտադրական հրապարակի եզրագծերով հատվածը՝ 200 մ², որի ոռոգումն իրականացվելու է ցենտրիֆուգում առաջացող ջրով:

Օրգանական պարարտանյութերի արտադրությունում աղմուկի աղբյուր են հադիսանում կոմպրեսորը /որի աղմուկի մակարդակը չի գերազանցում 80 դԲա/, գեներատորը, տրանսպորտային միջոցները և արտադրական հարթակում տեղադրված սարքավորումները:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են օգտագործվող թափոնների գործակցության, տեղափոխման և սարքավորումների ջերմային ռեժիմի ազդեցության հետ:

Գործունեության ընթացքում վնասակար նյութերի արտանետումները կառաջանան էլեկտրական էներգիայի ստացման նպատակով կենսագազի այրման ընթացքում՝ ազոտի երկօքսիդի, ածխածնի օքսիդի, սահմանային ածխաջրածինների տեսքով:

Օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրության ընթացքում կառաջանան հետևյալ արտադրական թափոնները.

- կավիտացիայի ավարտական փուլում ռեակտորի պարունակության շերտավորման արդյունքում մնալու են պինդ մնացորդներ, որոնք գործնականում ամբողջությամբ բաղկացած են ավազից և մի փոքր քանակությամբ հողային զանգվածից: Առավելագույն հնարավոր քանակը՝ 6500 տ/տարի: Ավազային մնացորդը կուտակվելու է արտադրական հրապարակի եզրային մասում և նախատեսվում է վաճառել շինարարական կազմակերպություններին,

- գազամաքրման համակարգում հավաքված փոշին՝ 9.1 տ/տարի քանակով, գազամաքրման համակարգից դուրս է բերվելու և անմիջապես խառնվելու է բուսական հումքի հետ,

- բանեցված կապարե կուտակիչներ և խոտանը՝ 0.16 տ/տարի, բանեցված շարժիչների յուղերի թափոններ՝ 0.2 տ/տարի, բանեցված օդաճնշիչ դողեր՝ 0.24 տ/տարի քանակով նախատեսվում է փոխարինման ժամանակ թողնել մատակարարի մոտ,

- կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ 9.6 մ³/տարի քանակով, պայմանագրային հիմունքներով կտեղափոխի Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված վայր:

Գնահատման հաշվետվությունում նախատեսվում է օդային ավազանն աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, սոցիալական, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում).

- բոլոր ռիսկային սարքավորումները համալրել ձայնային և լուսային ազդանշան սարքերով,

- գեներատորը համալրել գազի մատակարարման ավտոմատ անջատիչով,

- արտադրական մասնաշենքն ապահովել բնական և արհեստական օդափախության համակարգերով,

- պարբերաբար ստուգել տրանսպորտային միջոցների շարժիչների աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կարգաբերել կամ նորոգել դրանք,



- կազմակերպել տարածքի և շրջակայքի օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգ,
- վերահսկել ջրային լուծույթների սարքավորումների հերմետիկությունը,
- արտադրական հրապարակում կառուցել անձրևաջրերի հավաքման համակարգ և պարզարան,
- ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով առանձին հանգույցների ջրային համակարգերը համալրել ավտոնոմ չափիչներով,
- թափոնները տեղափոխել ծածկված թափքերով տրանսպորտային միջոցներով,
- քիմիական նյութերը պահեստավորել փակ շինության մեջ,
- բոլոր տեսակի թափոնների հավաքումը, ժամանակավոր պահեստավորումը և հետագա օգտագործումը կամ այլ լիցենզավորված կազմակերպություններին տրամադրելն իրականացնել՝ ըստ նախօրոք մշակված շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված թափոնների անձնագրերի,
- պարբերաբար ստուգել տեխնոլոգիական և մաքրման հանգույցների աշխատանքը,
- պարբերաբար իրականացնել սարքի տեխնիկական վիճակի ստուգում,
- արտադրական թափոնները հավաքել և կրկնակի օգտագործել՝ խառնելով հումքի նոր ծավալների հետ, և այլն:

Համաձայն հաշվետվության՝ արտադրամասում առկա են աշխատանքի անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների արձագանքման բոլոր անհրաժեշտ կահավորանքները և սարքավորումները:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, և հիմնավորվել է ընտրված տարբերակը:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվող ծախսերը կկազմի 1.8 մլն դրամ, այդ թվում տարեկան մոնիթորինգի ծախսերը՝ 440.0 հազար դրամ:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը մշակվել է՝ բնապահպանական ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան:

Փորձաքննության ներկայացված՝ գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, կատարվել է հնարավոր տնտեսական վնասի գնահատում, ինչպես նաև մշակվել է ազդեցությունների նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները: Նախատեսվող գործունեությունը կատարվելու է արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում գնահատման հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության բոլոր փուլերում Երևան քաղաքի էրեբունի վարչական շրջանում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Նախատեսվող գործունեության համար գործող նորմերով ապահովված է սանիտարապաշտպան գոտու ապահովման համար պահանջվող չափը:



Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախազձային վերլուծության ծրագիրը, ինչը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական մարմիններին և հանրությանը:
- Հաշվետվությունում նախատեսված բնապահպանական միջոցառումների չբավարարման դեպքում, նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Պահպանել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները և նորմերը:
- Պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը, ելնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված՝ 243, 244) ամրագրված՝ մարդու առողջության և անվտանգության պահանջից:

ԵՐԱՓՈՒԿԱԿԻՉ ՄԱՍ

«Գրին օրգանիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում՝ Արին Բերդի 5/7 հասցեի 3-րդ նրբանցք, 6/2 հասցեում նախատեսվող օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան



[Handwritten signature]

[Handwritten signature]